ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
Քարաձորի համայնքապետարան

N 18 21 հունվարի 2021թ.

ՀՀ Լոռու մարզպետ պարոն
Ա. Խաչատրյանին

Կից ներկայացնում եմ Քարաձոր համայնքի ղեկավարի թիվ 01 և թիվ 02 որոշումները :
Առդիր 3 էջ:

Համայնքի ղեկավար՝ Հ. Ռոստոմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ

գ.Քարաձոր փողոց 1 շենք13

19 հունվարի .2021թ.

ՈՐՈՇՈՒՄ

19 հունվարի 2021թ. N01

ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08.12.2020 ԹՎԱԿԱՆԻ,

ԹԻՎ 24 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՔԱՐԱՁՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ,

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին« ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23- ի թիվ 828-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգի 2-րդ և 10-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 16-ի թիվ 910-Ն որոշումը, «Սարգիս Թամազյան Ռոբերտի» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 01.09. 2020 թվականի թիվ 01/11.4/10580 2020 գրությունը՝

Որոշում եմ

1. Քարաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-109-0009-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասից

առանձնացված 0.06 հա այլ հողեր գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Քարաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-109-0009-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասից առանձնացված 0.06 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել գ. Քարաձոր, 5-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 6 հասցեն:

3. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը և 2-րդ կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

4. Աշխատակազմի ղեկավարին սահմանված կարգով փոփոխություն կատարել հողային հաշվեկշռում:

5. Ուժը կորցրած ճանաչել Քարաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի դեկտեմբերի 08-ի թիվ 24 որոշումը:

Քարաձոր համայնքի ղեկավար՝ Հ. Ռոստոմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ
, գ. Քարաձոր փողոց 1 շենք 13
20 հունվարի 2021

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 02
20 հունվարի 2021թ

ՔԱՐԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1.Քարաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (1.2-1), համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2021 թվականի մարտի 09-ին ժամը 14 .00-ին անցկացնել մրցույթ:

2.Մրցույթի անցկացման մասին տալ հայտարարություն http://www.azdarar .am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և այդ մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմին :

3. Մրցույթային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել Մ. Ավետիսյանին:

Համայնքի ղեկավար՝ Հ. Ռոստոմյան